

ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՔ ԱՆԴԱՄ ԳԱՌՆԱԼ ԳՀ-ԻՆ

Կը հրախրենք ձեզ անդամակցելու ԳՀ-ին, անոր միջոցաւ նպաստելու ձեր նախընտրած նպատակներուն եւ գործնականօրէն մասնակցելու զաղոթի ապագայի երաշխաւորման եւ բարգաւաճման, մեր բոլորին հետապնդած հեռանակարին:

Ձեր ընտանեկան ֆոնտը կարելի է հաստատել զանազան ձեւերով. լաւագոյնս յարմարելու համար ձեր նիւթական պայմաններուն եւ առաւելապէս օգտուելու համար տուրքէ զերծ կացուցման արտօսելի օրէնքներէն, կապ պահեցէք հիմնադրամի Խնամակալ Մարմնի անդամներէն մէկուն հետ:

Ծրագրուած նուիրատուութիւնները, նուիրատուին կողմէ, զգացական իր իմաստէն անդին գիտակցական միջոցառումներ են, հետեւաբար նման որոնումներէ առաջ միշտ փափաքելի է խորհրդակցիլ հիմնադրամի Խնամակալ Մարմնի անդամներուն հետ:

Բոլոր նուիրատուներու անունները կը հրապարակուին հիմնադրամի տարեկան տեղեկագրին մէջ, որպէս ընտանեկան ֆոնտեր, նուիրատուի մականունով:

Ֆոնտերու դրամագլուխը միշտ կը պահպանուի, սակայն անոնց շահարկումով յառաջացած հասոյթը կը տրամադրուի նուիրատուի նախասիրած կազմակերպութեան եւ կը գործածուի նուիրատուի փափաքին համաձայն:

Պարգեւներ (Endowments), Աւանդներ (Trusts) եւ Նուիրատուութիւններ

Հիմնադրամին մասնակցութիւնը դիրացնելու համար, ԳՀ-ն, հաւանական նուիրատուներուն կու տայ զանազան կարելիութիւններ մասնակցելու մայր ֆոնտի մը կամ հաստատելու առանձին ընտանեկան ֆոնտեր կամ աւանդներ, ըստ նուիրատուներու նախասիրութեան, նպատակներուն կամ նիւթական պայմաններուն:

Պարգեւներ հաստատելու համար նուիրատուն կրնայ մասնակցիլ նուիրելով կանխիկ դրամ, բաժնետիրութիւն եւ կամ որեւէ ստացուածքի շահաբաժին:

Հետեւեալը ամփոփ նկարագրական մըն է պարգեւի եւ կամ աւանդի ձեւով ֆոնտեր հաստատելու պայմաններուն եւ հետեւանքներուն մասին:



1.Պարզ նուիրատուութիւններ, (1000 տոլարէ նուազ) - նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, նուիրատուութեան գումարին համարժէք: Նուիրուած գումարը կը հատկացուի պատշաճ նպատակներու, ֆոնտի մարմնի հայեցողութեան համաձայն:

2.Պարզեւնէր, (1000 տոլար եւ աւելի) – նուիրատուութիւնը կը նայ ներառուիլ զոյութիւն ունեցող ֆոնտերէն մէկուն մէջ, նուիրատուի գրատըր համաձայնութեամբ: Նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, նուիրատուութեան գումարին համարժէք: Նուիրատուութեան դրամագլուխը կը պահպանուի եւ շահարկման հասոյթը կը յատկացուի որոշեալ ֆոնտի նպատակներուն:

3.Ընտանեկան Պարզեւնէր,(25,000 տոլարէ աւելի) – նուիրատուութիւնը կը նայ ներառուիլ զոյութիւն ունեցող ֆոնտերէն մէկուն մէջ, նուիրատուի գրատըր համաձայնութեամբ: Նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, նուիրատուութեան գումարին համարժէք: Նուիրատուութեան դրամագլուխը կը պահպանուի եւ շահարկման հասոյթը կը յատկացուի որոշեալ ֆոնտի նպատակներուն, կամ ֆոնտի մարմնին հետ համաձայնաբար, նուիրատուն կը նայ ճշդել որ շահարկման հասոյթը յատկացուի ֆոնտի նպատակներուն հետ համընկնող նպատակի մը: Նուիրատուութիւնը կ'արձանագրուի Գ-Հ-ի տարեկան տեղեկագրին մէջ, նուիրատուի մականունով, որպէս ընտանեկան պարզեւնէր:

4.Առանձնապէս կառավարուած Պարզեւնէր, (50,000 տոլար կամ աւելի) - ֆոնտը կը ստանայ ընտանեկան որակումը վերեւ նկարագրուած պայմաններով, սակայն, նուիրատուն կը նայ խնդրել ֆոնտի անկախ տնօրինումը, սահմանելով շահարկման ձեւը: Սահմանումները պէտք է ընդունելի ըլլան Տնօրէն Մարմնին:

5.Աւանդներ, (առնուազն 50,000 տոլար)- Աւանդ մը կարելի է հաստատել անհատի մը կամ կազմակերպութեան մը նախաձեռնութեամբ: Նուիրատուն Գ-Հ-ին կը փոխանցէ գումար մը կամ ստացուածք մը, որ կը շահարկուի Խնամակալ Մարմնի կողմէ:

Աւանդի դրամագլուխին օրինական տէրը կը մնայ նուիրատուն, եւ կը նայ իրեն վերադարձուիլ իր փափաքով, յարգելով իր եւ Գ-Հ-ի միջեւ համաձայնուած պայմանները: Նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, միայն աւանդի տարեկան շահարկման հասոյթին համարժէք, որ կը գործածուի ճշդումը նպատակներու համար:

Աւանդը կ'արձանագրուի Գ-Հ-ի տարեկան տեղեկագրին մէջ, որպէս ընտանեկան կամ կազմակերպական աւանդ:

